



“ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է “ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ԱՍՊԸ
ԽՈՐՀՐԴԻ 04.11.2013թ. թիվ 59 որոշմամբ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԻ 03.09.2021թ. թիվ 55 ՈՐՈՇՄԱՄԲ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԳՈՒՅՔԻ, ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ (ՏՆՕՐԻՆՈՂՆԵՐԻ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
2. ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	6
3. ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ՝ Error! Bookmark not defined.	
4. ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	12
5. ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ	14
6. ԲԱԺԻՆ 6. ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ	17
7. ԲԱԺԻՆ 7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	18
8. ԲԱԺԻՆ 8. ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ	22
9. ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	26
10. ԲԱԺԻՆ 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	27
11. ԲԱԺԻՆ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	27

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության սույն կանոնները, (**այսուհետև՝ Կանոններ**), մշակված են Հայաստանի Հանրապետության Օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, "Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2 Գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրությունը ներառվում է "Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի Ապահովագրության տեսակի "*Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն*", "Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն" և "Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն" դասերի մեջ:

1.3 Կանոնները հանդիսանում են գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (**այսուհետև՝ Պայմանագիր**) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.4 Կանոններում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում գործող օրենսդրությանը և Կանոններին:

1.5 ՀՀ օրենսդրության համաձայն և Կանոնների հիման վրա "ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ" Ապահովագրական ՍՊԸ-ն (**այսուհետև՝ Ապահովագրող**) ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետև՝ Ապահովադիր) հետ կնքում է Պայմանագրեր:

1.6 Պայմանագիրը կնքվում է հոգուտ գույքի սեփականատիրոջ կամ հոգուտ այլ անձի, ով ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահունի (**այսուհետև՝ Շահառու**):

1.7 Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագրում նշված Շահառուին փոխարինել մեկ այլ անձով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Շահառուին փոխարինելու մասին Ապահովադիրը պարտավոր է գրավոր ծանուցել Ապահովագրողին:

1.8 Եթե ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքներն անձից, որի օգտին կնքվել էր Պայմանագիրը, անցնում են այլ անձին, ապա այդ Պայմանագրի գծով իրավունքներն ու պարտականություններն անցնում են այն անձին, որին անցել են գույքի նկատմամբ իրավունքները: Անձը, որին անցել են ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքները, և որն ստանձնում է Պայմանագրի գծով իրավունքներն ու պարտականությունները, պարտավոր է անհապաղ, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցել Ապահովագրողին Պայմանագիրը վերաձևակերպելու նպատակով:

1.9 Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցման պահանջ:

1.10 Շահառուի օգտին Պայմանագիր կնքելը չի ազատում Ապահովադիրին այդ Պայմանագրի գծով իր պարտականությունները կատարելուց, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, կամ եթե Ապահովադրի պարտականությունները կատարվել են Շահառուի կողմից:

1.11 Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրով կարող է ապահովագրվել Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունն այլ (երրորդ) անձանց

(Շահառուների) հանդեպ, ում կյանքին, առողջությանը և/կամ գույքին կարող է պատճառվել վնաս Ապահովադրի (Ապահովագրված անձի) գործողության կամ անգործության արդյունքում:

1.12 “Այլ անձինք” կատեգորիային չեն դասվում ընտանիքի անդամները և Ապահովադրի աշխատակիցները: Ընդ որում՝ Պայմանագրով կարող է ապահովագրվել ինչպես հենց Ապահովադրի, այնպես էլ Պայմանագրում նշված այլ անձի (այսուհետ՝ Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունը, որի վրա կարող է դրվել նման պատասխանատվություն:

1.13 Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

1.14 Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

- *Ապահովագրող*՝ “ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” Ապահովագրական ՍՊԸ,
- *Ապահովադիր*՝ Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագիր կնքող անձ,
- *Անտիկվարիատ*՝ հին և բացառիկ գեղարվեստական ստեղծագործություններ կամ արժեքավոր իրեր, որոնք հանդիսանում են առևտրի և նմուշահավաքության օբյեկտ: Այդ գույքի անտիկվարիատ կամ հնության առարկա լինելը հաստատվում է փորձաքննության եզրակացությամբ կամ ստեղծագործությունների իսկությունը կամ արժեքավոր լինելը հաստատող այլ փաստաթղթերով, ինչպես նաև գեղարվեստական արժեքների գնահատման ակտով կամ յուրաքանչյուր առարկայի ամբողջական արժեքը հաստատող այլ փաստաթղթով:
- *Ապահովագրական հատուցում*՝ դրամական գումար, որը վճարվում է Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում՝ ապահովագրական գումարի սահմաններում:
- *Ապահովագրված անձ*՝ անձ (Ապահովադրից բացի), որի կողմից վնաս պատճառելու պատասխանատվության ռիսկն ապահովագրված է Պայմանագրով և ով պատասխանատու է այլ անձանց վնաս պատճառելու համար:
- *Ապահովագրավճար*՝ Պայմանագրով համաձայնեցված ապահովագրության արժեք, որը ենթակա է վճարման Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի համար:
- *Ապահովագրության օբյեկտի կորուստ*՝ իր մեջ ներառում է ինչպես ապահովագրության օբյեկտի ոչնչացումը, այնպես էլ այն տնօրինող անձից դրա հափշտակումը, թեև հնարավոր է, որ առարկան լինի ֆիզիկապես անվնաս վիճակում:
- *Առավելագույն ապահովագրական հատուցում*՝ Պայմանագրում սահմանված մեկ ապահովագրական պատահարի, մեկ ապահովագրական ռիսկի կամ մեկ անձին պատճառված վնասի գծով ապահովագրական հատուցման առավելագույն չափ:
- *Բնակարանի կառուցվածքային տարրեր (Բնակարան առանց ներքին հարդարանքը կամ ինժեներական սարքավորումները հաշվի առնելու (Կրող կառուցվածքներ)*՝ պատեր, միջնորմներ (տիպային շինարարության նախագծով նախատեսված), բնակարանի ծածկեր, պատշգամբներ, վերնահարկեր:
- *Գույքի (կառուցվածքային տարրերի) արժեզրկում*՝ ապահովագրական պատահարի արդյունքում գույքի նորմալ վիճակի խախտման, որակի և արժեքի վատթարացման հետևանքով դրա սկզբնական արժեքի մասնակի կամ լրիվ կորուստ:
- *Ներքին հարդարանք և ինժեներական սարքավորումներ*՝ բոլոր տեսակի ներքին սվաղի, ներկարարության, ապակեպատման, պաստառապատման և երեսպատման աշխատանքներ, հատակի ծածկեր, դռների կառուցվածքներ (մուտքի և միջսենյակային), ներառյալ հենց դուռը, դռան շրջանակը, բացառությամբ բնակարանի մուտքի դռան արտաքին հարդարանքը, պատուհանային բլոկներ՝ ներառյալ ապակեպատումը, տիպային շինարարական նախագծով չնախատեսված, լրացուցիչ կառուցված այլ միջնորմներ, ներբնակարանային աստիճաններ,

տեղադրված (ամրացված) սանտեխնիկայի ստացիոնար սարքավորումներ, օդորակիչներ, գազօջախներ և էլեկտրական օջախներ, բուխարիներ, հեռուստա- և ռադիո ավեհավաքներ, ջեռուցման, ջրա-գազա-ջերմա-էլեկտրամատակարարման, օդափոխության, տարբեր տիպի մաքրման, կոյուղուն լրացուցիչ միացված սարքավորումներ, թափոնների հեռացման, օդորակման, ջրամատակարարման համակարգեր:

- *Շինության կառուցվածքային տարրեր (Շինություն առանց ներքին հարդարանքը կամ ինժեներական սարքավորումները հաշվի առնելու)*՝ պատեր, միջնորմներ, ծածկեր, հիմք, աստիճաններ, տանիք՝ ներառյալ ջրատար խողովակների համակարգն ու ծածկը, շինության արտաքին հարդարանք:
- *Ռիսկի աստիճան*՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության մեծությունը, որն առկա է տվյալ իրավիճակում, որոշակի հանգամանքների բերումով առաջացող հնարավոր վնասի չափի փոփոխությունը:
- *Ռիսկի գնահատում*՝ ռիսկի չափանիշները բնութագրող ռիսկային բոլոր հանգամանքների բնական-իրեդեն և արժեքային վերլուծություն:
- *Քաղաքացիական պատասխանատվություն*՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված քաղաքացիների և կազմակերպությունների՝ այլ անձանց (ֆիզիկական և իրավաբանական) նկատմամբ պատասխանատվության տեսակ, որոնց կարող է վնաս պատճառվել վնաս պատճառողի որևէ գործողության կամ անգործության արդյունքում, որին տուժած անձինք իրավունք ունեն ներկայացնելու վնասը լրիվ ծավալով փոխհատուցելու պահանջ:
- *Ապահովագրական ռիսկեր*՝ այլ անձանց կողմից ապահովագրության օբյեկտների դիտավորյալ ոչնչացում (վնասում)՝ վնասների պատճառում հատուկ դիտավորությամբ, միտումնավոր կատարված գործողության արդյունքում, որը կարող է պատճառել նշանակալից վնասներ:
- *Ապահովագրության օբյեկտի կայծակնահարում, որը չի առաջացրել հրդեհ*՝ վնասի պատճառում բնության տարերային երևույթի հետևանքով, որն առաջացել է մթնոլորտային ուժեղ էլեկտրական պարպումներից:
- *Ապահովագրության օբյեկտի վրա թռչող սարքերի կամ դրանց մասերի կամ բեռի վայր ընկնելը*՝ վնասի պատճառում թռչող սարքի (ինքնաթիռի, տիեզերանավի, ուղղաթիռի, օդապարիկի և այլն), դրա մասերի կամ բեռի ընկնելու հետևանքով՝ անկախ այն բանից, թե վնասը պատճառվել է հրդեհի, պայթյունի, մեխանիկական վնասման թե օդային հարվածի հետևանքով:
- *Ապահովագրության օբյեկտի վրա ծառերի վայր ընկնելը*՝ վնասի պատճառում ծառերի ինքնաբերաբար ընկնելու արդյունքում:
- *Ապահովադրին (Շահառուին) չպատկանող հարևան շենքերից ջրի կամ այլ հեղուկների ներթափանցումը*՝ վնասի պատճառում այն դեպքերի հետևանքով, երբ այլ տարածքներից (այսինքն՝ Ապահովադրին (Շահառուին) չպատկանող տարածքներից) Ապահովադրի բնակարան (սենյակ) լցվում են ջուր, այլ հեղուկներ և գույքին հասցնում են վնաս:
- *Ավազակություն*՝ վնասի պատճառում ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակման հետևանքով, որն իրականացվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով:
- *Երկրաշարժ*՝ վնասների պատճառում ստորգետնյա ցնցումների և երկրի մակերևույթի տատանումների հետևանքով, որոնք առաջանում են երկրակեղևում կամ վերին միջակա երկրապատյանում հանկարծակի ճեղքումների և տեղաշարժերի հետևանքով և փոխանցվում են մեծ տարածությունների վրա առաձգական տատանումների տեսքով:
- *Կարկուտ*՝ վնասների պատճառում տարվա տաք ժամանակներին 5մմ-ից 15մմ տրամագծով խիտ սառույցից սառցե մասնիկների տեսքով տեղացող մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնք սովորաբար ուղեկցվում են ամպրոպով գուգորդվող տեղատարափ անձրևով:
- *Կոտրանքով գողություն*՝ վնասների պատճառում ուրիշի գույքի գաղտնի հափշտակության հետևանքով: Կոտրանքով գողությունը կատարվում է ապահովագրության տարածք ապօրինի

մուտք գործելու և ապահովագրության տարածքի սահմաններում գտնվող և ապահովագրված գույքը պահելու համար նախատեսված իրերը և պարագաները կոտրելու, վնասելու, ինչպես նաև կեղծ բանալիներ, սարքեր կամ այլ տեխնիկական միջոցներ օգտագործելու, շինության կոնստրուկտիվ մասերին (պատեր, հատակ, առաստաղ, տանիք, դռներ, պատուհաններ) վնաս պատճառելու ճանապարհով: Կեղծ բանալիների, սարքերի կամ այլ տեխնիկական միջոցների կիրառումը պետք է հաստատվի Հայաստանի Ոստիկանության կամ այլ իրավասու մարմինների կողմից:

- *Հեղեղում (վարարում)*՝ վնասի պատճառում ջրի սպառման և մակարդակի ինտենսիվ, սովորաբար կարճատև ավելացման հետևանքով, որն առաջանում է անձրևներից կամ ձնհալից:
- Հրդեհ՝ ներառյալ այրման նյութերի, ինչպես նաև հրդեհի մարման համար օգտագործված ջրի (փրփուրի) կամ այլ նյութերի ազդեցություն՝ վնասի պատճառում չկառավարվող այրման հետևանքով, որը պատճառում է նյութական վնաս, վնաս քաղաքացիների կյանքին և առողջությանը, վնաս հասարակության և պետության շահերին: Այրումն առաջացնում է բոց (կրակ) և մարմանդ վառում: Հրդեհի ժամանակ ապահովագրված գույքի վրա անուղղակի ազդեցություն են համարվում նաև կողմնակի երևույթները՝ մրոտումը (ծխոտումը), մակերեսային հալումը, հրդեհի մարման ժամանակ կիրառված ջրի (փրփուրի) կամ այլ միջոցների) ազդեցությունը:
- *Հուսի՛ն*՝ վնասի պատճառում զառիվար լեռնային լանջերով ձյան և (կամ) սառույցի արագ, անսպասելի առաջացած դեպի վար շարժման հետևանքով, ինչը վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար, վնաս է հասցնում տնտեսության և շրջակա բնության միջավայրի օբյեկտներին:
- *Մրրիկ*՝ վնասի պատճառում ավելի քան 20 մ/վ արագություն ունեցող ուժեղ փոքրամասշտաբ քամու հետևանքով, որը ծովում առաջացնում է ուժեղ ալեկոծություն, իսկ ցամաքում՝ ավերածություններ:
- *Պայթյուն*՝ մեծ հարվածային ուժով էներգիայի սաստիկ արագության միանվագ առաջացման արդյունքում պատճառված վնասները, որն առաջացել է որևէ քիմիական միացության կամ նյութի (տաք խառնուրդի, գազի և այլն) բաղադրության փոփոխման (քիմիական ռեակցիայի) արդյունքում: Առավել տարածված են գազային սարքերի, շոգեկաթսաների, բալոնների պայթյունները: Պայթյունի արդյունքում առաջացող հարվածային ուժը (պայթյունային ալիքը) քայքայում է առարկան, ինչից առաջանում է պայթյունը, ինչպես նաև վնասներ է հասցնում գույքին:
- *Ջրից վնասումը*՝ ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հրդեհամարման համակարգերի վթարի, ինչպես նաև ցածր ջերմաստիճանների ազդեցության արդյունքում նշված համակարգերի վնասման պատճառով՝ վնասների պատճառում հարմարանքների, սարքերի, խողովակների կամ այդպիսի համակարգերի (ցանցերի) մեխանիզմների անսպասելի վնասման (կոտրվելու) հետևանքով, որի արդյունքում խախտվում է դրանց նորմալ գործելը: Առավել տարածված է հանդիսանում ջեռուցման համակարգի ջեռուցման սարքերի վթարները, ներառյալ ցածր ջերմաստիճանների (սառնամանիքների) ազդեցությամբ առաջացած վթարները:
- *Ջրհեղեղ*՝ վնասների պատճառում տարածքը ջրով ողողվելու արդյունքում, որը հանդիսանում է տարերային աղետ (կարող է առաջանալ ջրի (այդ թվում՝ ստորգետնյա ջրերի) մակարդակի բարձացման, ջրերի վարարման կամ հորդացման ժամանակ, գետաբերանում ջրի շարժման խաթարման կամ սառցահոսքի, մի տեղ հավաքման ժամանակ, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառույցների ճեղքման դեպքում): Ջրհեղեղները պետք է տարբերել տեղանքի (բնակելի և օժանդակ շինությունների) ողողումներից, որոնք առաջացել են ներտնտեսական ոռոգման համակարգերի, ջրմուղային (կոյուղային, մաքրման) շինությունների և հարմարանքների վթարի կամ այլ անսարքությունների արդյունքում, ինչպես նաև

ջրամբարների, ջրանցքների, ամբարտակների, հիդրոէլեկտրակայանների, հանքերի, հանքահորերի շինարարության, վերանորոգման հետևանքով առաջացած ողողումներից:

- *Մելայվ*՝ վնասի պատճառում ջրի և փխրուն ապարների խառնուրդից բաղկացած մեծ կործանարար ուժով սրընթաց հոսանքի հետևանքով, որը հանկարծակի առաջանում է, ոչ մեծ լեռնային գետերի ավազաններում՝ ինտենսիվ անձրևների կամ բուռն ձնհալի, ինչպես նաև փլվածքների ճեղքման արդյունքում:
- *Մոդանք*՝ վնասի պատճառում լեռնային ապարների զանգվածների լանջով տեղաշարժվելու հետևանքով, որն առաջանում է սեփական քաշի և լրացուցիչ բեռնվածության ազդեցության տակ՝ ապարների տակից ողողման, գերխոնավացման, սեյսմիկ ցնցումների և այլ երևույթների հետևանքով:
- *Տայֆուն (ուժեղ փոթորիկ)*՝ վնասների պատճառում փոթորկի կամ մրրիկի ուժին հասնող, 300-400 կմ տրամագծով ընթացող մթնոլորտային պտուտահողմի հետևանքով: Տայֆունի ներսում ճնշման մեծ փոփոխությունների պատճառով քամու արագությունը հասնում է ահռելի չափերի (մոտ 400կմ/ժ): Տայֆունի մեջ նկատվում է օդի ինտենսիվ բարձրացում և հզոր կուտակ-անձրևաբեր ամպերի առաջացում, որոնցից տեղում են հսկայական քանակությամբ տեղումներ, որոնք կարող են ջրհեղեղ առաջացնել:
- *Տարերային աղետ*՝ վնասի պատճառում նշանակալից մասշտաբների հասնող կործանարար բնական և/կամ բնական-անտրոպոգեն երևույթների կամ գործընթացների հետևանքով, ինչի արդյունքում կարող է առաջանալ կամ առաջացել է մարդկանց կյանքին և առողջությանն ուղղված սպառնալիք, ինչպես նաև նյութական արժեքների և շրջակա բնության միջավայրի բաղադրիչների ավերածություն կամ ոչնչացում: Երևույթը պետք է ճանաչվի որպես տարերային աղետ Հայաստանի պետական հիդրոոդերևութաբանական ծառայության կամ ԱԻՆ կողմից:
- *Տվյալ տեղանքի համար անսովոր մթնոլորտային տեղումներ*՝ հորդառատ անձրևի, ձյունատեղման, երկարատև անձրևների հետևանքով վնասների պատճառում, որոնք տվյալ տեղանքի համար հատուկ չեն և իրավասու մարմինների կողմից որակվում են որպես անսովոր:
- *Տրանսպորտային միջոցների վրաերթ*՝ վնասների պատճառում տրանսպորտային միջոցի ճանապարհից շեշտակի դուրս գալու հետևանքով:
- *Ուժգին քամի*՝ երկրագնդի մակերեսի նկատմամբ 14 մ/վ, բայց ոչ ավել, քան 32 մ/վ արագությամբ կամ հորիզոնական բաղադրիչով օդի շարժման հետևանքով վնասներ հասցնելը:
- *Փլվածք*՝ վնասների պատճառում սարերի ուղղաձիգ և գառիվայր լանջերի վրայի լեռնային ապարների, գետահովիտների և ծովափների մեծ զանգվածների անսպասելի պոկվելու և ընկնելու, հետևանքով, որոնք հիմնականում տեղի են ունենում լեռնային ապարների կապակցվածության թուլացման հաշվին, որն առաջանում է հողմահարման պրոցեսների, մակերեսային և ստորգետնյա ջրերի գործունեության ազդեցության հետևանքով:
- *Փոթորիկ*՝ վնասների պատճառում շատ ուժեղ և երկարատև քամու հետևանքով, որի արագությունը գերազանցում է 32մ/վ:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵՎՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

2.1 Ապահովագրության օբյեկտներ են հանդիսանում.

2.1.1 Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ (գույքի ապահովագրություն),

2.1.2 Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված այլ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասը հատուցելու պարտականության հետ (քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն):

2.2 Պայմանագրով կարող են ապահովագրվել՝

ա) անձնական օգտագործման համար նախատեսված շինություններ (այսուհետ՝ շինություններ), ներառյալ՝ տնտեսական, կենցաղային, սպորտային կամ այլ նշանակության կառույցներ, դրանց առանձին կառուցվածքային տարրեր կամ առանց առանձին կառուցվածքային տարրերի շինություններ (առանց հիմքի բնակելի տուն, առանց վառարանի բնակելի տուն և այլն),

բ) բնակարաններ, սենյակներ, ավտոտնակներ և օժանդակ շինություններ, դրանց առանձին կառուցվածքային տարրեր կամ բնակարաններ՝ առանց առանձին կառուցվածքային տարրերի,

գ) բազմաբնակարանային շենքում ընդհանուր օգտագործման տարածքներ, կառույցներ,

դ) կառուցվածքային տարրերի ներքին կամ արտաքին հարդարանք,

ե) տեղադրված ինժեներական սարքավորումներ,

զ) անավարտ շինարարության անշարժ գույքի օբյեկտներ (շինությունների համար պարտադիր է հիմքի, պատերի, տանիքի, դռների և փակ պատուհանների առկայությունը, եթե շինարարական նախագծով նախատեսված է վերջիններիս առկայությունը),

է) տնային գույք,

ը) այլ գույք:

2.3 «Ընդհանուր» Պայմանագրի պայմաններով կարելի է ապահովագրել տնային գույքը, այսինքն՝ Ապահովադրին (Շահառուին) և/կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող տան հարդարման, առօրյա օգտագործման, հարմարավետության, անձնական օգտագործման առարկաներ. կահույք, ձայնա-տեսա-ֆոտոլուսանկարչական սարքավորումներ, էլեկտրոնիկա և կենցաղային տեխնիկա, այդ թվում՝ համակարգիչներ, արտաքին սարքավորումներ, կազմտեխնիկա, երաժշտական գործիքներ, հագուստ, սպիտակեղեն, կոշիկեղեն, սպասք, օպտիկայի առարկաներ, քիվեր, շերտավարագույրներ, գորգեր և գորգային ապրանքներ, անկողնային պարագաներ, գրքեր, մանկասայլակներ, մանկական խաղալիքներ, արհեստական տոնածառեր, տոնածառի զարդարանքներ, մանր տնտեսական, այգեգործական, սպորտային գույք, կենցաղային-մշակութային և այլ պահանջմունքներ բավարարելու համար նախատեսված այլ գույք:

2.4 «Հատուկ» Պայմանագրի պայմաններով ապահովագրության է ընդունվում այլ գույք, այսինքն՝ ցանկացած այլ գույք, որը չի առնչվում տնային գույքի հետ. շինության (բնակարանի), բաղնիքի, ավտոտնակի և այլնի շինարարության (ընթացիկ վերանորոգման) համար նախատեսված շինարարական և հարդարման նյութեր, հեծանիվներ, սկուտերներ, որոնք ենթակա չեն գրանցման սահմանված կարգով, տրանսպորտային միջոցների պահեստամասեր, դետալներ և պարագաներ, փայտամշակման, փականագործական հաստոցներ, ջրային պոմպեր, մոտոբլոկներ, գազոնահնձիչներ և այլ մեխանիզմներ, էլեկտրական գործիքներ և այլն, ձմեռային այգի, լանդշաֆտային ճարտարապետական տարրերի հավաքածու, սենյակային էկզոտիկ բույսեր, ծաղկային-դեկորատիվ մշակաբույսեր, ճարտարապետական փոքր կաղապարներ, հավաքածուներ (հավաքածուի առանձին առարկաներ), նկարներ, բացառիկ և անտիկվարային առարկաներ, թանկարժեք մետաղներից իրեր, թանկարժեք, կիսաթանկարժեք և արհեստական քարերից իրեր Ապահովադրի (Շահառուի) մոտ իրավասու կազմակերպության կողմից տրված, դրանց ամբողջական արժեքի մասին վկայող փաստաթղթի կամ դրանց ձեռքբերման գինը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում, որսորդական զենք, հրազեն, դրանք սահմանված կարգով պահպանելու և կրելու մասին իրավասու մարմինների կողմից տրված թույլտվության առկայության դեպքում, մեղվաբուծական գույք, մասնագիտական սպորտային, զբոսաշրջային, որսորդական, ձկնորսական գույք, արտաքին սարքավորումներ, փայտ, խոտ, Ապահովադրի (Շահառուի) համար հատուկ արժեք ներկայացնող այլ գույք, բացառությամբ՝ Կանոնների 2.6 կետում նշված գույքի: «Հատուկ» Պայմանագրի պայմանների հիման վրա տնային գույքն ապահովագրության ընդունվում է 5.18 կետում նշված դեպքերում:

2.5 Ապահովագրության չեն ընդունվում.

2.5.1 խարիտուկ շինությունները, որոնց ֆիզիկական մաշվածությունը կազմում է 75 և ավելի տոկոս,

2.5.2 վթարային վիճակում գտնվող, կապիտալ վերանորոգման կարիք ունեցող կամ քանդման ենթակա շենքերում գտնվող բնակարանները,

2.5.3 տնային և/կամ այլ գույքը, որը գտնվում է բնակության համար ոչ պիտանի, խարխուլ տարածքներում, վթարային վիճակում գտնվող, կապիտալ վերանորոգման կարիք ունեցող կամ քանդման ենթակա շենքերում, շինմոնտաժային աշխատանքների իրականացման փուլում գտնվող շինություններում,

2.5.4 տնային և/կամ այլ գույքը, որի ֆիզիկական մաշվածությունը կազմում է 75 և ավելի տոկոս,

2.5.5 տնային և/կամ այլ գույքը, որը գտնվում է հասարակական օգտագործման տարածքներում կամ կառույցներում (ցախանոցներում, ամբարներում, մառաններում, նկուղներում, ձեղնահարկերում, աստիճանավանդակների վրա, միջանցքներում և այլն),

2.5.6 տարերային աղետներ սպառնացող գոտում գտնվող օբյեկտներ, նման վտանգի մասին սահմանված կարգով հայտարարելու պահից կամ իրավասու մարմինների կողմից վտանգի փաստը հաստատող համապատասխան փաստաթղթի կազմման պահից: Նման դեպքում օբյեկտը կարող է ապահովագրության ընդունվել Կանոնների 3.3.1 կետում նշված բոլոր ապահովագրական ռիսկերը տեղի ունենալու գծով, բացառությամբ այն ապահովագրական ռիսկի, որի վտանգի մասին հայտարարվել է: Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ Պայմանագիրը կնքվում է նոր ժամկետով մինչև նախորդ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը (վերակնքում): Ընդ որում՝ ապահովագրության ժամկետը նախորդ և վերակնքվող Պայմանագրերով պետք է լինի ոչ պակաս, քան մեկ տարի յուրաքանչյուր Պայմանագրի գծով, վերակնքվող Պայմանագրի գծով ապահովագրական գումարը չի կարող գերազանցել նախորդ Պայմանագրով սահմանված գումարի չափը, ընդ որում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լրացուցիչ ապահովագրավճարի վճարում:

2.5.7 օբյեկտները, որոնք պետական մարմինների կարգադրությամբ ենթակա են առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրանց վրա արգելանք դնելու, վնասման կամ ոչնչացման,

2.5.8 օբյեկտները, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել, այդ թվում՝ ինքնաշեն տնային գույքը,

2.5.9 փայտից տները և շինությունները, ինչպես նաև դրանցում գտնվող գույքը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

2.5.10 ինքնակամ կառույցները:

2.6 Գույքի ապահովագրությունը չի տարածվում պաշարների վրա (սպառվող նյութերի՝ դիմահարդարման նյութերի, օծանելիքի, սանիտարահիգիենիկ ապրանքների և այլնի վրա, բացառությամբ՝ շինարարական նյութերի, փայտի, խոտի), կազմտեխնիկայի համար ծախսվող նյութերի, տնկիների և սերմերի վրա: Ապահովագրության չեն ընդունվում, եթե հավաքածու չեն հանդիսանում, տեխնիկական ավաստները և արտադրատեխնիկական նշանակության այլ իրերը, փաստաթղթերը, գծագրերը, արժեթղթերը, դրամանիշները, հանքաքարերի տեսքով թանկարժեք մետաղները, հանքային հումքի տեսքով քարերը, ձեռագրերը, տեսաերիզները և լուսանկարները, ֆոտո- և տեսանյութերը, կրոնական պաշտամունքի առարկաները, կոնսակտային լինզաները:

2.7 Կանոնների համաձայն կնքված Պայմանագրերը գործում են ՀՀ տարածքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

3.1 Կանոնների համաձայն ապահովագրական ռիսկ է հանդիսանում ենթադրվող իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Պայմանագիրը:

3.2 Ապահովագրական պատահար է հանդիսանում տեղի ունեցած իրադարձությունը, որը նախատեսված է Պայմանագրով, որի տեղի ունենալու արդյունքում առաջանում է Ապահովագրողի՝ Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունը:

Եթե տվյալ իրադարձությունն առաջացել է հաջորդական դեպքերի արդյունքում և դրա սկզբնական և գլխավոր պատճառ հանդիսացող դեպքն ապահովագրված է եղել Պայմանագրով, ապա տվյալ իրադարձությունը ճանաչվում է ապահովագրական պատահար՝ անկախ մնացած դեպքերի ապահովագրված լինելու հանգամանքից:

3.3 Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն Ապահովագրողն ապահովում է ապահովագրական պաշտպանվածություն Կանոնների 3.3.1 կետով սահմանված ապահովագրական ռիսկերի կամ դրանց համակցությունների ուղղակի ազդեցության արդյունքում ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի դեպքերից,

3.3.1 Ռիսկերի ամբողջական փաթեթ.

դժբախտ պատահարներ՝ ա) հրդեհ, ներառյալ՝ այրման նյութերի, ինչպես նաև ջրի (փրփուրի) և հրդեհի մարման ընթացքում կիրառված այլ միջոցների ազդեցությունը, բ) պայթյուն, գ) ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հրդեհամարման համակարգերի վթարի, ինչպես նաև ցածր ջերմաստիճանների ազդեցության արդյունքում նշված համակարգերի վնասման պատճառով ջրից վնասում, դ) Ապահովադրին (Շահառուին) չպատկանող հարևան տարածքներից ջրի և այլ հեղուկների ներթափանցում, ե) տրանսպորտային միջոցների վրաերթ և/կամ կենդանու հետ բախում, զ) ապահովագրության օբյեկտի վրա ծառերի վայր ընկնելը, է) ապահովագրության օբյեկտի վրա թռչող սարքերի, դրանց մասերի կամ բեռի վայր ընկնելը, տարերային աղետներ՝ ը) ուժգին քամի, թ) տայֆուն, ժ) փոթորիկ, ի) մրրիկ, լ) երկրաշարժ (եթե Պայմանագրում առկա է հատուկ նշում տվյալ ռիսկն ապահովագրելու վերաբերյալ), խ) ջրհեղեղ ծ) հեղեղում, կ) կարկուտ, հ) տվյալ տեղանքին ոչ հատուկ մթնոլորտային տեղումներ, ձ) ապահովագրության օբյեկտի կայծակնահարում, որը չի հանգեցրել հրդեհի առաջացմանը դ) սողանք (եթե Պայմանագրում առկա է հատուկ նշում տվյալ ռիսկն ապահովագրելու վերաբերյալ), ճ) փլվածք, մ) սելավ, յ) ձյան հուսիս, սեփականության նկատմամբ հանցագործություններ՝ ն) կոտորանքով գողություն, շ) ավազակություն, ո) այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացում (վնասում),

3.4 Հրդեհի մարմանն ուղղված գործողություններ կատարելու, ինչպես նաև կողմնակի երևույթների (ծխահարման, հալման և այլնի) արդյունքում ապահովագրության օբյեկտի ոչնչացումը կամ վնասումը հավասարեցվում են հենց հրդեհի կամ պայթյունի արդյունքում ապահովագրության օբյեկտի ոչնչացմանը կամ վնասմանը:

3.5 Ապահովագրական պատահար է համարվում կենցաղային էլեկտրասարքերի, էլեկտրոնային սարքավորումների, հեռուստա-աուդիո-տեսա-ռադիո սարքավորումների հրդեհվելը, որը բերել է դրանց վնասմանը (դեֆորմացիայի, հալման) կամ ոչնչացմանը, անկախ պատճառից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Ընդ որում՝

3.5.1 հրդեհվելու տակ հասկացվում է կոմպլեկտավորող իրերի, կենցաղային էլեկտրասարքերի հանգույցների, էլեկտրոնային սարքավորումների, հեռուստա-աուդիո-տեսա-ռադիո սարքավորումների անսպասելի բռնկվելը (բաց այրվելը, բոցը), ինչի արդյունքում կրակից վնասվում են կամ ոչնչացվում են դրանց այլ կոմպլեկտավորող իրերը, հանգույցները և բլոկները,

3.5.2 ապահովագրական պատահար չի հանդիսանում առանձին կոմպլեկտավորող իրերի, հանգույցների և/կամ բլոկների այրվելը կամ շարքից դուրս գալը (խափանումը)՝ անկախ պատճառից,

3.6 Պայմանագրի գործողությունը չի տարածվում ապահովագրության օբյեկտների այնպիսի վնասման կամ ոչնչացման վրա, որոնք տեղի են ունեցել երաշխիքային պարտավորություններով ծածկվող հանգամանքների արդյունքում:

3.7 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով սահմանված վճարի դիմաց Պայմանագրում կարող է ընդգրկվել հետևյալ ապահովագրական ռիսկը. մեխանիկական վնասում՝ անկանխատեսելի ֆիզիկական ուժերի անսպասելի մեխանիկական ազդեցության հետևանքով վնասի առաջացում՝ Ապահովադրի (Շահառուի) գործողությունների և/կամ Կանոնների 3.3.1 կետում թվարկված իրադարձությունների հետ ուղիղ պատճառային կապի բացակայության պայմաններում:

3.8 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով սահմանված վճարի դիմաց Պայմանագրով կարող է նախատեսվել բնակելի տարածքների վարձակալության համար ծախսերի փոխհատուցում ապահովագրված բնակելի տարածքի վերանորոգման ընթացքում, երբ այն վնասվել է Կանոնների 3.3.1 կետում նշված իրադարձությունների կամ դրանց համակցությունների արդյունքում: Նշված ծախսերը հատուցվում են պայմանով, որ ապահովագրված բնակարանը մշտական բնակության համար պիտանի չէ:

3.9 Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասով Պայմանագիրը կարող է կնքվել այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու դեպքերի համար, որոնք առաջացել են Պայմանագրով սահմանված ապահովագրության հասցեում (տարածքում)՝ Կանոնների 3.3.1 կետում նշված իրադարձությունների կամ դրանց համակցությունների արդյունքում:

3.10 Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունը կարող է ապահովագրվել ապահովագրության հետևյալ տարբերակներով.

3.10.1 այլ անձանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար,

3.10.2 այլ անձանց գույքին վնաս պատճառելու համար,

3.10.3 այլ անձանց գույքին, կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար:

3.11 Ապահովագրական պատահար չեն համարվում այն իրադարձությունները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում՝

3.11.1 միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցություն,

3.11.2 ռազմական գործողություններ, զորաշարժեր կամ այլ ռազմական միջոցառումներ,

3.11.3 քաղաքացիական պատերազմ, ցանկացած տիպի ժողովրդական հուզումներ, գործադուլներ, սահաբեկչական գործողություններ,

3.11.4 պետական մարմինների կարգադրությամբ իրականացված ապահովագրության օբյեկտի առգրավում, բռնագրավում, ռեկվիզիցիա, դրա վրա արգելանք դնելը, ոչնչացում կամ վնասում,

3.11.5 քայքայում, կոռոզիա կամ այլ բնական երևույթների հետևանքով ապահովագրության օբյեկտի հատկությունների փոփոխությունների պրոցեսներ, գույքի վնասում սնկերի, թրթուրների, կրծողների, միջատների, այլ վնասատուների և ընտանի կենդանիների կողմից,

3.11.6 ապահովագրության օբյեկտների ֆիզիկական մաշվածություն (կառուցվածքների, սարքավորումների, նյութերի), դրանց շահագործման նորմատիվ ժամկետների խախտում, ապահովագրության օբյեկտների արտադրական, շինարարական թերություններ, ապահովագրության օբյեկտների կառուցվածքային թերություններ, անորակ կատարված մոնտաժային աշխատանքներ, էթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

3.11.7 ապահովագրության օբյեկտի կրակով մշակում կամ այլ ջերմային եղանակով դրա վրա ազդեցություն (օրինակ՝ չորացում, եփում, արդուկում, ապխտում, տապակում, տաք մշակում, ոչ հրդեհի հետևանքով առաջացած այրում (օրինակ՝ կրակի պահպանման աղբյուրներին շատ մոտ տարածությունում գույքի տեղադրման դեպքում) և այլն),

3.11.8 ապահովագրված օբյեկտներ, շինություն կամ բնակարան, որտեղ գտնվում է ապահովագրված գույքը, տեղումների ներթափանցում՝ ծածկերից, պանելային շենքերի կարերից, վերնահարկից, պատշգամբներից, տեռասներից, բաց պատուհաններից, դռներից և այլնից, ինչպես նաև դիտավորությամբ արված կամ վթարային վիճակում գտնվելու կամ շինարարական արատների հետևանքով առաջացած կարերից, բացակներից և անցքերից, էթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

3.11.9 էլեկտրական հոսանքի կարճ միացման, մեկուսացման խախտումների և տեղադրված ինժեներական էլեկտրասարքավորումների և էլեկտրական լարերի այլ վթարների և անսարքությունների հետևանքով առաջացած ծխահարում, ինժեներական էլեկտրասարքավորումների և էլեկտրական

լարերի հալում, եթե վերջիններս չեն հանդիսացել ապահովագրական ռիսկի ազդեցության հետևանք, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

3.11.10 ապահովագրական ռիսկի ազդեցության հետևանք չհանդիսացող փլվածք (փլուզում),

3.11.11 Ապահովադրին (Շահառուին) պատկանող ապահովագրված օբյեկտում պայթուցիկ նյութերի և պայթյունավտանգ սարքավորումների պահպանում, պատրաստում և օգտագործում, ինչպես նաև քիմիական և ֆիզիկական փորձերի անցկացում,

3.11.12 ապահովագրված օբյեկտի պատահական ոչնչացում կամ պատահական վնաս, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.12 Ապահովագրական պատահար չեն համարվում կենցաղային էլեկտրասարքերի, էլեկտրոնային սարքավորումների, հեռուստա-ձայնա-տեսա-ռադիո սարքավորումների աշխատանքի խաթարման կամ խափանման դեպքերը, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ`

3.12.1 ապահովագրական տարածքից դուրս տեղի ունեցած տարերային աղետների կամ դրանց հետևանքների,

3.12.2 էլեկտրաէներգիայի ոչ որակյալ մատակարարման (ցանցում լարման լրիվ անկում, լարման խախտումներ, գերլարում, լարման բարձրավոլտ բռնկումներ, հաճախականության տատանումներ և այլն),

3.12.3 էլեկտրացանցում կարճ միացման (էլեկտրալարերի ոլորման կամ ճկման, մեկուսացման խախտման, թաքնված գծերի վնասման և այլնի)

3.13 Ապահովագրական պատահար չի համարվում վերանորոգման (վերակառուցման) աշխատանքների ընթացքում կամ արդյունքում առաջացած վնասը:

3.14 Ապահովագրական պատահարներ չեն համարվում (և ըստ այդմ չեն հատուցվում) հետևյալ իրադարձությունները`

3.14.1 Ապահովադրի (Ապահովադրի աշխատակիցների) դիտավորության արդյունքում Շահառուի գույքին վնաս պատճառելը,

3.14.2 Երրորդ անձանց գույքին վնաս պատճառվելը` վերջինիս դիտավորության արդյունքում,

3.15 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական պատահարներ չեն համարվում և ըստ այդմ չեն հատուցվում`

3.15.1 Ապահովադրի կամ այլ օգտագործողի կողմից ներքին գործերի մարմիններում (նստիկանությունում) պարտադիր գրանցման ենթակա ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում պատճառված վնասը,

3.15.2 Վնասը, որը պատճառվել է Ապահովադրի կողմից օրենքի, այլ իրավական ակտերի, արտադրական կանոնների, նորմերի կամ նորմատիվային փաստաթղթերի դրույթների չկատարման հետևանքով,

3.15.3 Մարդկանց, կենդանիների կամ բույսերի օրգանիզմում գենետիկ փոփոխությունների հետևանքով պատճառված վնասը,

3.15.4 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված վնասը;

3.15.5 Ապահովադրի կողմից բարձր վտանգավորության աղբյուրների շահագործման կամ դրանք այլ նպատակներով օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

3.15.8 Կոնստրուկցիաների, սարքավորումների կամ նյութերի շահագործման նորմատիվային ժամկետներից ավել օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

3.15.9 Ապահովադրի կողմից պատրաստվող (իրացվող, կատարվող կամ մատուցվող) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) չբավականացման (անբավարարության), ինչպես նաև այդ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ բավարար տեղեկատվության առկայության հետևանքով պատճառված վնասը,

3.15.10 Երրորդ անձին պատճառված վնասը, որը հետևանք է մշտական, պարբերաբար, կամ երկարատև թերմիկ ազդեցության կամ գազերի, գոլորշիների, ճառագայթների, խոնավության կամ ցանկացած, այդ թվում մթնոլորտում կշռված մասնիկների (ծուխ, փոշի և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ազդեցությունը հանկարծակի է կամ չկանխատեսված և կան ակնհայտ ապացույցներ, որ այդ ազդեցության հետևանքով վնասը անխուսափելի էր:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1 Ապահովագրական գումարն Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

4.2 Գույքի ապահովագրության գծով ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ և չի կարող գերազանցել Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ապահովագրության օբյեկտի գտնվելու վայրում ապահովագրության օբյեկտի իրական (ապահովագրական) արժեքը: Գույքի իրական (ապահովագրական) արժեքը կարող է որոշվել՝

4.2.1 Ապահովադրի կողմից հայտարարված արժեքի հիման վրա՝ վերջինիս չափը հաստատող փաստաթղթերի ներկայացման պայմանով,

4.2.2 անկախ գնահատողի գնահատման հիման վրա,

4.2.3 այլ եղանակով՝ կողմերի համաձայնությամբ:

4.3 Ապահովագրության օբյեկտի իրական (ապահովագրական) արժեքի տակ հասկացվում է՝

4.3.1 շինությունների ապահովագրության դեպքում՝ ապահովագրության օբյեկտի շինարարության (կառուցման) արժեքը՝ հաշվի առնելով մաշվածությունը (բնակարանների ապահովագրության դեպքում՝ դրանց շուկայական արժեքը) և/կամ վերանորոգման (վերականգնման) համար ծախսերը, ներառյալ հարդարման նյութերի և սարքավորումների (հաշվի առնելով դրանց մաշվածությունը) արժեքը և Պայմանագրի կնքման պահի դրությամբ կատարված աշխատանքների արժեքը,

4.3.2 տնային և/կամ այլ գույքի ապահովագրության դեպքում՝ վերջինիս նոր վիճակում գտնվելու գնի և մաշվածության տոկոսի տարբերությունը:

4.4 Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը գերազանցում է գույքի իրական (ապահովագրական) արժեքը, ապա Պայմանագիրն իրական (ապահովագրական) արժեքը գերազանցող գումարի չափի մասով առոչինչ է: Տվյալ դեպքում ապահովագրավճարի ավել վճարված մասը վերադարձման ենթակա չէ:

4.5 Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրական գումարը կարող է սահմանվել թե որպես միասնական գումար՝ ապահովագրության օբյեկտների խմբի, ապահովագրության մեկ օբյեկտի համար, և թե որպես առանձին գումար՝ ապահովագրության օբյեկտի առանձին տարրերի (առարկաների) համար:

4.6 Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրն իրավունք ունի ներկայացնելու ապահովագրական գումարի ավելացման դիմում (նոր կառուցված կամ հիմնական պայմանագրում չընդգրկված շինությունների (կառույցների) ապահովագրություն, տնային գույքի գծով ապահովագրական գումարի ավելացում, ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրական գումարի ավելացում) ապահովագրության օբյեկտների իրական (ապահովագրական) արժեքի սահմաններում: Ընդ որում՝ կնքվում է լրացուցիչ Պայմանագիր՝ հիմնական Պայմանագրի գործողության ավարտին մնացած ժամկետով: Հիմնական և լրացուցիչ Պայմանագրերով ընդհանուր ապահովագրական գումարը չպետք է գերազանցի ապահովագրության օբյեկտների իրական (ապահովագրական) արժեքը:

4.7 Քաղաքացիական պատասխանատվության գծով ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագիր կնքելիս ապահովագրական գումարը կարող է սահմանվել՝

4.7.1 այլ անձանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար,

4.7.2 այլ անձանց գույքին վնաս պատճառելու համար,

4.7.3 այլ անձանց գույքին, կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար:

4.8 Ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով: Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ Պայմանագրում ապահովագրական գումարները կարող են նշվել արտարժույթով, որոնց համարժեք են ՀՀ դրամով համապատասխան գումարներ (այսուհետ՝ ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրություն):

4.9 Պայմանագրով կարող է նախատեսված լինել ապահովագրական հատուցման առավելագույն չափ՝ մեկ ապահովագրական պատահարի, մեկ ապահովագրական ռիսկի, մեկ օբյեկտի, ինչպես նաև մեկ անձի կյանքին կամ առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասի գծով:

4.10 Ապակյա, ճենապակյա և այլ կոտրվող իրերի յուրաքանչյուր կտորի գծով ապահովագրական գումարը չի կարող գերազանցել 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.11 Նկարների, բացառիկ և անտիկվարային առարկաների, թանկարժեք մետաղներից իրերի, թանկարժեք, կիսաթանկարժեք և արհեստական քարերից իրերի յուրաքանչյուր կտորի գծով ապահովագրական գումարը չի կարող գերազանցել 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.12 Ապահովագրական գումարը տվյալ օբյեկտի գծով ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է կատարված հատուցման գումարի չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.13 Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը համապատասխան ստորագրությամբ Ապահովադրին առձեռն հանձնելու կամ փոստով ուղարկելու պահից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

4.14 Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

4.15 Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող Պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ ռիսկի համար սահմանած տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կարող են կիրառվել Հնկերության կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

4.16 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Ապահովագրության պայմանագրով:

4.17 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին (այդ թվում ապահովագրական գործակալին), իսկ

անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին:

4.18 Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

4.19 Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

4.20 ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվում է ՀՀ դրամով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագրի կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

4.21 Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Ապահովագրության Պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23.59 ժամը:

4.22 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարածամկետման հնարավորություն:

4.23 Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադիրին ծանուցելու:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից գրավոր ձևով Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

5.2 Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց, Պայմանագրում նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրին (Շահառուին) վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

5.3 Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել ապահովագրության օբյեկտի զննում: Զննում իրականացնելու ընթացքում Ապահովադրի ներկայությամբ ստուգվում է ապահովագրության օբյեկտների առկայությունը, ինչպես նաև այն գործոնների առկայությունը, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:

5.4 Ապահովադրի ցանկությամբ կարող են ապահովագրվել Ապահովադիրին և նրա ընտանիքի անդամներին պատկանող բոլոր ապահովագրության օբյեկտները կամ ապահովագրության օբյեկտների խմբեր կամ առանձին ապահովագրության օբյեկտներ:

5.5 Ընտանիքի անդամ են ճանաչվում ամուսինը, կինը, ծնողները, երեխաները և օրենսդրությամբ նախատեսված անձնական ոչ գույքային կամ գույքային հարաբերություններ ունեցող այլ անձինք (նույն հասցեում համատեղ բնակվող, ընդհանուր տնտեսություն, ընտանիքի ընդհանուր բյուջե վարող, համատեղ սնվող, տնային պարագաներից և կենցաղային իրերից համատեղ օգտվող, դրանց ձեռքբերմանը համատեղ մասնակցություն ունեցող անձինք):

5.6 Պայմանագիրը կնքելիս Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ կարող է սահմանվել չհատուցվող գումար՝ վնասի չափ, որի հատուցման պարտավորությունը կրում է Ապահովադիրը: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվել ապահովագրական գումարի նկատմամբ ինչպես տոկոսներով, այնպես էլ բացարձակ արժեքով՝

5.6.1 ոչ պայմանական (նվազեցվող) չհատուցվող գումար սահմանելու դեպքում փոխհատուցվող վնասը բոլոր դեպքերում նվազեցվում է չհատուցվող գումարի չափը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում,

5.6.2 պայմանական (չնվազեցվող) չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում չհատուցվող գումարի չափը չգերազանցող վնասի հատուցման համար, սակայն հատուցում է վնասն ամբողջությամբ, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

5.7 Շինության (բնակարանի) ներքին հարդարանքի և ինժեներական սարքավորումների, տնային կամ այլ գույքի Պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կարող է կնքվել պայմանով, որ դրամական արտահայտությամբ ապահովագրական հատուցումը փոխարինվի ապահովագրական գումարի սահմաններում կորցրած գույքին համարժեք գույքի տրամադրմամբ:

5.8 Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ՝ լրացուցիչ պայմանների և դրույթների ներառման, որոշակի ռիսկերի բացառման վերաբերյալ, ինչի մասին Պայմանագրում կատարվում է համապատասխան նշագրում:

5.9 Մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը գույքի սեփականատիրոջ մահվան դեպքում նրա օրինական ժառանգները Պայմանագրի վերաձևակերպման համար լրացնում են Պայմանագրի գծով պարտականություններն ընդունելու մասին դիմում: Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում այդպիսի պայմանագրով ապահովագրական հատուցում իրականացնելու Ապահովագրողի պարտավորությունը ծագում է միայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթը ներկայացնելուց հետո:

Շինությունների (բնակարանների) ապահովագրության առանձնահատկությունները

5.10 Շինությունների (բնակարանի), շինությունների (բնակարանի) ներքին հարդարանքի, սարքավորումների Պայմանագիրը կարող է կնքվել հետևյալ պայմաններով՝

5.10.1 գույքի վնասման դեպքում ապահովագրության օբյեկտի վերականգնման (վերանորոգման) ուղղված ծախսերի փոխհատուցման՝ «հաշվի առնելով մաշվածությունը» (շահագործման ժամկետի ընթացքում),

5.10.2 գույքի վնասման դեպքում ապահովագրության օբյեկտի վերականգնման (վերանորոգման) ուղղված ծախսերի փոխհատուցման՝ «առանց հաշվի առնելու մաշվածությունը» (շահագործման ժամկետի ընթացքում):

5.11 Շինությունները, այդ թվում՝ տնտեսական կամ այլ նշանակության կառույցները, համարվում են ապահովագրված Պայմանագրում նշված հասցեում (տարածքում) գտնվող հողակտորի վրա: Բնակարանները համարվում են ապահովագրված Պայմանագրում նշված ապահովագրության հասցեում (տարածքում):

5.12 Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը փոքր է ապահովագրության օբյեկտի իրական (ապահովագրական) արժեքից, ապա շինությունների (բնակարանի), ներքին հարդարանքի, սարքավորումների Պայմանագիրը համարվում է կնքված «համամասնական»

հատուցման պայմանով, այսինքն՝ շինության (բնակարանի) վնասման դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն: Կողմերի համաձայնությամբ Պայմանագիրը կարող է կնքվել «առաջին ռիսկի» ապահովագրական փոխհատուցման պայմանով, այսինքն՝ շինության (բնակարանի) վնասման դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է վնասի չափով, սակայն ապահովագրական գումարի սահմաններում: Այսինքն՝ սահմանվում է հատուցման առավելագույն գումար և այն դեպքում, երբ վնասի չափը գերազանցում է սահմանված հատուցման առավելագույն գումարը, տվյալ գումարը գերազանցող մասը չի հատուցվում:

Տնային և/կամ այլ գույքի ապահովագրության առանձնահատկությունները

5.13 Կախված նշանակությունից և ապահովագրական գումարի չափից, տնային և/կամ այլ գույքը կարող է ապահովագրվել «ընդհանուր» և/կամ «հատուկ» Պայմանագրի պայմաններով:

5.14 Տնային գույքի «ընդհանուր» Պայմանագրով ապահովագրության օբյեկտները կարող են ապահովագրվել՝

5.14.1 ընդհանուր ապահովագրական գումարով՝ առանց ապահովագրության օբյեկտները խմբերի բաշխելու,

5.14.2 ապահովագրական գումարը ապահովագրության օբյեկտների խմբերին բաշխելով: Պայմանագիրը կնքվում է բոլոր կամ առանձին ապահովագրական ռիսկերի գծով պատասխանատվությամբ (Կանոններում նշված ապահովագրության Տարբերակներով):

5.15 «Ընդհանուր» Պայմանագիրը կարող է կնքվել ապահովագրության օբյեկտների գույքագրմամբ կամ առանց գույքագրման: Ապահովագրության օբյեկտների գույքագրումը կարող է կատարվել ըստ յուրաքանչյուր առարկայի, ըստ ապահովագրության օբյեկտների խմբերի կամ ըստ ապահովագրության օբյեկտների խմբերի՝ առանձին առարկաների գույքագրմամբ:

5.16 Տնային գույքը և/կամ այլ գույքը համարվում է ապահովագրված՝

5.16.1 Պայմանագրում նշված ապահովագրության հասցեում (տարածքում) գտնվող շինությունում (բնակարանում) և տնտեսական կառույցներում: Ընդ որում՝ Ապահովադրի (Շահառուի) օժանդակ կառույց հանդիսացող ցախատանը, նկուղում կամ բնակարանի այլ կցակառույցում գտնվող գույքը չի համարվում ապահովագրված բնակարանի գույքի Պայմանագրով,

5.16.2 Պայմանագրում սահմանված ապահովագրության այլ հասցեում (տարածքում):

5.17 «Հատուկ» Պայմանագիրը կնքվում է ապահովագրության օբյեկտների պարտադիր զննմամբ և գույքագրմամբ՝ անկախ ապահովագրական գումարի չափից: Գույքագրման ցուցակում յուրաքանչյուր ապահովագրական օբյեկտի համար առանձին նշվում են լրիվ անվանումը, հիմնական բնութագիրը, ապահովագրական գումարը:

5.18 «Հատուկ» Պայմանագրի պայմաններով ապահովագրման ենթակա են՝

5.18.1 տնային և/կամ այլ գույքը՝ ժամանակավոր գտնվելու (պահպանվելու) վայրում՝ գործուղման, հանգստի վայրում, ցուցահանդեսում, Ապահովադրի (Շահառուի) գտնվելու վայրում և այլն,

5.18.2 տնային և/կամ այլ գույքը, որը գտնվում է պատասխանատու պահպանության տակ, գրավի տակ և այլն:

5.19 Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրության օբյեկտները կամ ապահովագրության օբյեկտների խմբերը, որոնք ապահովագրվել են «ընդհանուր» Պայմանագրով, կարող են ապահովագրվել «հատուկ» Պայմանագրով:

5.20 «Հատուկ» Պայմանագրի պայմաններով կողմերի համաձայնությամբ կարող է ապահովագրվել հողակտորի վրա (շինությունից դուրս) գտնվող այլ գույք. շինության (բնակարանի), բաղնիքի, ավտոտնակի և այլնի շինարարության (վերանորոգման) համար նախատեսված շինարարական նյութեր, լանդշաֆտային ճարտարապետության տարրերի հավաքածուներ, փոքր

ճարտարապետական կադապարներ, Ապահովադրի (Շահառուի) համար հատուկ արժեք ներկայացնող այլ գույք:

5.21 Եթե տնային և/կամ այլ գույքը դուրս են բերվում Պայմանագրում նշված ապահովագրության հասցեում (տարածքում) գտնվող շինությունից (բնակարանից) և տնտեսական կառույցներից, ապա այդ գույքի մասով ապահովագրական ծածկույթը չի գործում մինչև նշված գույքը ապահովագրության տարածք վերադարձնելը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.22 Ապահովագրության օբյեկտները, որոնք ժամանակավորապես թողնվել են Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա ընտանիքի անդամի կողմից ապահովագրության տարածքում առանց հսկողության անընդմեջ 30 (երեսուն) օրացուցային օրից ավելի ժամկետով, համարվում են ապահովագրված միայն հրդեհի, ներառյալ՝ այրման նյութերի, ինչպես նաև ջրի (փրփուրի) և հրդեհի մարման ընթացքում կիրառված այլ միջոցների ազդեցության, կայծակնահարման, որը չի հանգեցրել հրդեհ, պայթյունի, երկրաշարժի (եթե Պայմանագրում առկա է հատուկ նշում տվյալ ռիսկն ապահովագրելու վերաբերյալ), տրանսպորտային միջոցների վրաերթի և/կամ կենդանու հետ բախման, ապահովագրության օբյեկտի վրա ծառերի, թռչող սարքերի, դրանց մասերի կամ բեռի վայր ընկնելու ռիսկերից, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1 Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

6.2 Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Ապահովագրության պայմանագրում: Ապահովագրության պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել Ապահովագրության պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

6.3 Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

բ) Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և դրանց հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

գ) կողմերի համաձայնությամբ.

դ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

6.4 Պայմանագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում՝

6.4.1 Պայմանագրով Ապահովադրի (Շահառուի) նկատմամբ Ապահովագրողի կողմից պարտավորությունների լրիվ ծավալով կատարման,

6.4.2 Պայմանագրում սահմանված ժամկետներում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրվճարը չվճարելու (ապահովագրվճարի հերթական մասի վճարումը չկատարելու) դեպքում,

6.4.3 եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր հանգամանքների բերումով,

6.4.4 հիմնական պայմանագրի՝ Պայմանագրի գործողության ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ին, կամ այն լրիվ տարիների, ամիսների և օրերի վերջին օրվա ժամը 24:00-ին, որոնց ժամկետով կնքվել էր ապահովագրության պայմանագիրը,

6.4.5 լրացուցիչ պայմանագրի՝ հիմնական Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի հետ միաժամանակ:

6.4.6 Մինչև նախորդ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նոր ժամկետով Պայմանագիր կնքելու դեպքում, նոր (վերակնքված) Պայմանագիրն ուժի մեջ է մտնում նախորդ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի պահից:

6.5 Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

6.5.1 Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 20%)/ Պայմանագրի գործողության օրեր * Պայմանագրի չլրացած օրեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

6.5.2 Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 20%)/ Պայմանագրի գործողության օրեր * Պայմանագրի չլրացած օրեր, բացառությամբ Կանոնների 4.21 և 4.23 կետերում սահմանված դեպքերում:

6.6 Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման հայցը Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել կամ ստացել է տվյալ Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի կեսից ավելի չափով ապահովագրական հատուցում:

6.7 Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

ԲԱԺԻՆ 7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Ապահովագրողը պարտավոր է:

7.1.1 Պայմանագիր կնքելիս Ապահովադրի ծանոթացնել Կանոններին, բացատրել Պայմանագիր կնքելու կարգը, Ապահովադրի տրամադրել Կանոնները, Պայմանագիրը,

7.1.2 հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին,

7.1.3 ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ապահովագրական հատուցում, իսկ հատուցումը մերժելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը

պատվիրված նամակով 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաքել Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության վայրի հասցեով,

7.1.4 չիրապարակել Ապահովադրի, Ապահովագրված անձի, Շահառուի, նրանց գույքային կարգավիճակի մասին տեղեկություններ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2 Ապահովագրողն իրավունք ունի.

7.2.1 ստուգելու ապահովագրության օբյեկտի վիճակը, ապահովագրության օբյեկտի մասին Ապահովադրի կողմից հայտնած տվյալների համապատասխանությունը փաստացի վիճակին, ապահովագրության օբյեկտի պահպանման և շահագործման նորմերի և կանոնների, ինչպես նաև Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում դրա պայմանների պահպանումը,

7.2.2 պահանջելու Պայմանագրի պայմանների փոփոխում և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կնքված Պայմանագրի պայմանները փոփոխող հանգամանքների և այնպիսի գործոնների առկայության դեպքում, որոնք կարող են էապես ազդել ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի ռիսկի աստիճանի բարձրացման վրա (այդ թվում՝ շենքերի, շինությունների վերնորոգում, վերակառուցում, հակաառևանգային համակարգի անսարքություն, ապահովագրության տարածքի բանալիների կորուստ և/կամ փականների, բանալիների վնասում): Փոփոխում կատարելու Ապահովագրողի մտադրության, ինչպես նաև Ապահովադրի՝ փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Պայմանագիրն անմիջապես լուծելու Ապահովադրի իրավունքի մասին Ապահովագրողը պարտավոր է նախապես ծանուցել նրան: Եթե Ապահովադիրը (Շահառուն) առարկում է Պայմանագրի պայմանների փոփոխությունը և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու լուծել Պայմանագիրը և հատուցելու Պայմանագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները,

7.2.3 գրավոր պահանջ ներկայացնելու Ապահովադրին ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին գրավոր տեղեկություններ հայտնելու վերաբերյալ,

7.2.4 պահանջելու, որ Պայմանագիրը ճանաչվի անվավեր, եթե Պայմանագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովադիրն Ապահովագրողին հայտնել է կանխահայտ սուտ տեղեկություններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին,

7.2.5 տալ Ապահովադրի (Շահառուի) համար պարտադիր ցուցումներ և ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են վնասի չափը նվազեցնելու, իրադարձության հանգամանքները, պատճառները, հնարավոր մեղավոր անձանց որոշելու համար,

7.2.6 Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում մեկ անգամ ընդունել ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում՝ առանց իրավասու մարմիններից փաստաթղթեր պահանջելու, եթե վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարի 5 (հինգ) տոկոսը, կամ Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը՝ կախված այն բանից, թե որ ցուցանիշն է ավելի փոքր, այն պայմանով, որ ապահովագրական պատահարի հանգամանքները, պատճառը, վնասի չափը, ինչպես նաև Ապահովադրի (Շահառուի, Ապահովագրված անձի) մոտ դիտավորության բացակայությունն Ապահովագրողի մոտ ինքնուրույն կատարված ստուգման հիման վրա կասկած չեն առաջացնում,

7.2.7 ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված ապահովագրավճարի հերթական մասի գումարը,

7.2.8 հետաձգել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունը որպես ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու մասին որոշման կայացումը, եթե ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի կամ այլ անձանց կյանքին,

առողջությանը և/կամ գույքին վնաս պատճառելու հարցով հարուցվել է քրեական գործ՝ մինչև ապահովագրական պատահարի հանգամանքների և/կամ պատճառի և/կամ վնասի չափի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթի ստացումը,

7.2.9 ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում ընդունելու համար անցկացնել ինքնուրույն ստուգումներ՝ սեփական հայեցողությամբ ներգրավելով մասնագետների,

7.2.10 սեփական հայեցողությամբ կրճատել Ապահովադրի (Շահառուի) կողմից պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը (օրինակ՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, պատճառը կամ հանգամանքները, վնասի չափը հաստատող և այլն),

7.2.11 իրականացնել այլ գործողություններ Պայմանագրի գծով իր պարտականությունները կատարելու նպատակով,

7.2.12 իրականացնել Պայմանագիրը կնքելիս Ապահովադրի կողմից հայտնած անհատական տվյալների (անհատական տվյալների մասին օրենսդրության համաձայն) մշակում (ներառյալ դրանց տարածումը, օգտագործումը, պահպանումը, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրումը) ապահովագրական գործունեություն իրականացնելու, ապահովագրական պրոդուկտների կամ գործընկերների պրոդուկտների մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով, այդ թվում՝ կապի միջոցների օգտագործմամբ Ապահովադրի հետ ուղղակի կապ հաստատելու միջոցով, օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

7.2.13 չվճարելու ապահովագրական հատուցում, եթե Ապահովադիրը (Շահառուն) իրեն չի տեղեկացրել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին՝ Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 48 (քառասունութ) ժամվա ընթացքում:

7.3 Ապահովադիրը պարտավոր է:

7.3.1 վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) Պայմանագրում սահմանված չափով և ժամկետներում,

7.3.2 Պայմանագիրը կնքելիս գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի գծով կնքված և կնքվող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին,

7.3.3 Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան Ապահովադրին (Շահառուին) այդ մասին հայտնի դառնալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա (բացառությամբ 1.4 կետում նշված դեպքի),

7.3.4 պահպանել ՀՀ նորմատիվ-իրավական ակտերով սահմանված հակահրդեհային անվտանգության կանոններն ու նորմերը, տեխնիկական շահագործման կանոնները, արտադրողի ցուցումները, սանիտարատեխնիկական պահանջները՝ ուղղված ապահովագրության օբյեկտի պահպանմանն ու պիտանելիության ապահովմանը, ապահովել ապահովագրության տարածք ազատ մուտք գործելու անհնարինությունը (փակ դռներ, փակ պատուհաններ և այլն), ժամանակին կատարել անհրաժեշտ վերանորոգման և պրոֆիլակտիկ աշխատանքները: Սույն պահանջը տարածվում է նաև Շահառուի, Ապահովադրի (Շահառուի) ընտանիքի անդամների վրա,

7.3.5 Ապահովագրողի հետ համաձայնեցված ժամկետի ընթացքում վերացնել ապահովագրական ռիսկի աստիճանը էապես բարձրացնող հանգամանքները, որոնց վերացման անհրաժեշտության մասին Ապահովագրողը գրավոր հայտնել է Ապահովադրին (Շահառուին),

7.3.6 ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում (Ապահովադրի (Շահառուի) բացակայության դեպքում նրա հետ բնակվող նրա ընտանիքի չափահաս անդամները կամ նրա աշխատողները)՝

7.3.6.1 պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,

7.3.6.2 Ապահովագրողի ներկայացուցչի հետ համաձայնեցնելով՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության հանգամանքների, պատճառների, պատճառված վնասի չափի մասին տեղեկություններ ստանալու նպատակով դիմել համապատասխան կազմակերպություններին՝ իրավապահ մարմիններին, Հրշեջ ծառայությանը, վթարատեխնիկական ծառայության համապատասխան մարմիններին և այլ կազմակերպություններին,

7.3.6.3 Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 48 (քառասունութ) ժամվա ընթացքում,

7.3.6.4 անհապաղ հայտնել համապատասխան իրավասու մարմիններին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 48 (քառասունութ) ժամվա ընթացքում (Հայաստանի Ոստիկանությանը՝ (կոտրանքով գողություն, ավազակություն, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացում (վնասում)), Հայաստանի Հրշեջ ծառայությանը (հրդեհ, պայթյուն, կայծակ), գույքի ոչնչացման, վնասման կամ կորստի պատճառներն ու հանգամանքները պարզելու իրավասություն ունեցող այլ մարմիններին, այլ երկրի համապատասխան իրավասու մարմիններին (եթե Պայմանագրով նախատեսված է եղել գույքն ապահովագրության տարածքից դուրս բերելու պայման և ապահովագրական պատահարը տեղի է ունեցել ՀՀ սահմաններից դուրս),

7.3.6.5 պահպանել վնասված ապահովագրության օբյեկտը զննում իրականացնելու համար, ապահովել Ապահովագրողի ներկայացուցչի մուտքն ապահովագրության տարածք և մասնակցել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից ակտի կազմելուն,

7.3.6.6 հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

7.3.6.7 ներկայացնել փաստաթղթեր, որոնք՝

7.3.6.7.1 հաստատում են Ապահովադրի (Շահառուի) գույքային շահի առկայությունը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական, առքուվաճառքի կամ վարձակալության պայմանագիր և այլն),

7.3.6.7.2 տրվել են համապատասխան մարմինների կողմից և հաստատում են հայտնած իրադարձության տեղի ունենալու փաստը և հանգամանքները,

7.3.6.7.3 հաստատում են Ապահովադրի կողմից իրականացված ծախսերը՝ պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր, դրամարկղի մուտքի օրդեր և/կամ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն՝ կանխիկ վճարման դեպքում, բանկի վճարման հանձնարարագիր՝ անկանխիկ ձևով վճարելու դեպքում:

7.4 Ապահովադիրն իրավունք ունի.

7.4.1 Պայմանագրով և Կանոններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,

7.4.2 ներկայացնել դիմում ապահովագրության պայմանների փոփոխման, լրացուցիչ ապահովագրության և/կամ ապահովագրական գումարի մեծացման վերաբերյալ,

7.4.3 Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում այն կորցնելու դեպքում գրավոր դիմում ներկայացնելուց հետո Ապահովագրողից ստանալ կրկնօրինակը: Կրկնօրինակը տրամադրելուց հետո կորցրած Պայմանագիրը համարվում է անվավեր,

7.4.4 վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

7.4.5 ապահովագրական հատուցման մերժում ստանալու դեպքում Ապահովագրողից ստանալ նման որոշման պատճառաբանված հիմնավորումը:

7.5 Շահառուներն իրավունք ունեն ստանալ ապահովագրական հատուցում և կատարել Ապահովադրի պարտականությունները Պայմանագրի գծով:

7.6 Կանոնների հիման վրա Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած Ապահովադիրը հաստատում է իր համաձայնությունը՝ կապված Ապահովագրողի կողմից ստորև թվարկված Ապահովադրի անհատական տվյալների մշակման հետ՝ Պայմանագրի գծով ապահովագրություն իրականացնելու համար, այդ թվում՝ պայմանագրի գծով ապահովագրական ծառայությունների տրամադրման, վնասների կարգավորման, պայմանագրի վարման որակը ստուգելու նպատակով, ինչպես նաև Ապահովադիրին՝ Ապահովագրողի այլ պրոդուկտների և ծառայությունների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

Ապահովադրի անհատական տվյալները ներառում են. անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և վայրը, անձնագրային տվյալները, բնակության հասցեն, Ապահովագրողի հետ կնքած Պայմանագրում նշված այլ տեղեկություններ (ներառյալ դրա անբաժանելի մասերը՝ ապահովագրության դիմում, հավելվածներ և այլն), որոնք ՀՀ օրենսդրության համաձայն կարող են դասվել անհատական տվյալներին:

Ապահովագրության Կանոնների կետի վերը նշված դրույթները վերաբերում են նաև Շահառուին/Ապահովագրված անձին՝ նրանց կողմից անհատական տվյալների մշակման համար Ապահովագրողին գրավոր համաձայնություն տալու դեպքում:

ԲԱԺԻՆ 8. ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1 Իրական վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ հաշվի առնելով ապահովագրական հատուցման հարցի որոշման համար անհրաժեշտ նախահաշիվները, հաշվետվությունները, ակտերը, եզրակացությունները և այլ փաստաթղթերը՝ ստացված համապատասխան իրավասու մարմիններից/անձանցից:

8.2 Կանոնների 8.1 կետում նշված իրավասու մարմիններ/անձինք են հանդիսանում Հայաստանի Ոստիկանությունը (կոտրանքով գողության, ավազակության, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացման (վնասման) դեպքում), Հայաստանի Հրշեջ ծառայությունը (հրդեհի, պայթյունի, կայծակի դեպքում), համատիրությունը (ջրից վնասման դեպքում), գույքի ոչնչացման, վնասման կամ կորստի պատճառներն ու հանգամանքները պարզելու իրավասություն ունեցող այլ մարմինները, այլ երկրի համապատասխան իրավասու մարմինները (եթե Պայմանագրով նախատեսված է եղել գույքն ապահովագրության տարածքից դուրս բերելու պայման և ապահովագրական պատահարը տեղի է ունեցել ՀՀ սահմաններից դուրս), անկախ փորձագետները:

8.3 Ապահովագրական հատուցման գումարը հաշվարկելու նպատակով իրական վնասի տակ հասկացվում են գույքային կորուստները, որոնք առաջացել են ապահովագրական ռիսկերի ազդեցության արդյունքում գույքի (դրա մասերի) վնասումից կամ ոչնչացումից:

8.3.1 Պայմանագրով ապահովագրված ապահովագրության օբյեկտի «ոչնչացման» տակ հասկացվում է ապահովագրական ռիսկերի ազդեցության արդյունքում դրա անվերադարձ կորուստը:

8.3.2 Պայմանագրով ապահովագրված ապահովագրության օբյեկտի «վնասման» տակ հասկացվում է դրա որակական բնութագրիչների այնպիսի վատթարացումը, որը վերանորոգման եղանակով հնարավոր է բերել սկզբնական նշանակությամբ օգտագործելու համար պիտանի վիճակի, և դրա վերականգնման ծախսերն ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին գործող

գներով չեն գերազանցում ապահովագրության օբյեկտի իրական արժեքի 75 (յոթանասունհինգ) տոկոսը: Մնացած դեպքերում օբյեկտը համարվում է ոչնչացված:

8.4 Իրական վնասի գումարի մեջ չեն մտնում այն ծախսերը, որոնք կատարվել են ապահովագրության օբյեկտի վիճակը բարելավելու համար ի համեմատություն այն վիճակի, որում այն գտնվել է մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը, ինչպես նաև չստացված օգուտները և բարոյական վնասը: Իրականացված աշխատանքների ակտի բացակայության դեպքում չեն ընդգրկվում բոլոր անուղղակի ծախսերը, այդ թվում՝ շինարարության կառավարման, շինարարական արտադրության կազմակերպման և դրա աշխատողներին սպասարկելու հետ կապված վրադիր ծախսերը:

8.5 Գույքային ապահովագրության օբյեկտի ոչնչացման կամ կորստի դեպքում իրական վնասի տակ հասկացվում է ապահովագրության օբյեկտի ապահովագրական գումարի չափով վնասը՝ նվազեցված ըստ նպատակի օգտագործման և իրացման համար պիտանի մնացորդների արժեքով՝ հաշվի առնելով արժեզրկումը և ավելացնելով ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ կապված վնասների նվազեցմանն ու կանխմանն ուղղված փաստաթղթորեն հաստատված ծախսերը, եթե դրանք ճանաչվել են անհրաժեշտ կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումով (ջրահեռացում, վնասված մասերի ամրացում և այլն):

8.6 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ կապված վնասը նվազեցնելու ու կանխելու համար կատարված ծախսերը փոխհատուցվում են ապահովագրության օբյեկտի ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն՝ անկախ այն բանից, որ իրական վնասի փոխհատուցման հետ միասին դրանք կարող են գերազանցել ապահովագրական գումարի չափը:

8.7 Գույքի ապահովագրության օբյեկտի վնասման դեպքում իրական վնասի չափը հավասար է դրա վերանորոգման (վերականգնման) համար կատարված ծախսերի արժեքին՝ հաշվի առնելով մաշվածությունն ու արժեզրկումը, որպեսզի ապահովագրության օբյեկտի արժեքը վերականգնվի այն չափով, որը համապատասխանում է անմիջապես մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը դրա ունեցած արժեքին:

Եթե շինության (բնակարանի), ներքին հարդարանքի և ինժեներական սարքավորումների Պայմանագիրը կնքված է ապահովագրության օբյեկտի վերանորոգման (վերականգնման) ծախսերը «առանց մաշվածությունը հաշվի առնելու» (շահագործման ժամկետի ընթացքում) փոխհատուցելու պայմանով, ապա իրական վնասի չափը որոշելիս մաշվածությունը հաշվի չի առնվում:

Իրական վնասի չափը որոշելիս հաշվի են առնվում նաև աղբի հեռացման և ապամոնտաժման հետ կապված ծախսերը և վնասի կարգավորման ծախսերը, որոնք սակայն չեն կարող գերազանցել տվյալ ապահովագրության օբյեկտի ապահովագրական գումարի 10 (տասը) տոկոսը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8.8 Իրական վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից գույքի ապահովագրության յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին, բացառությամբ գույքի ոչնչացման (կորստի) դեպքերի:

8.9 Ապահովադիրն (Շահառուին) պատկանող գույքի ոչնչացման, վնասման կամ կորստի դեպքում իրական վնասի չափը կարող է հաշվարկվել՝

8.9.1 գործադիր իշխանության մարմինների կողմից հաստատված շինությունների արժեքի գնահատման ցուցանիշների ժողովածուի հիման վրա արժեքների վերահաշվարկով՝ հաշվի առնելով ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին գործող գների վրա կիրառվող ճշգրտող գործակիցները,

8.9.2 Պայմանագիրը կնքելիս յուրաքանչյուր ապահովագրության օբյեկտի գծով համաձայնեցված՝ շինության (բնակարանի) տարրերի (տեսակարար կշիռների) արժեքի տոկոսային հարաբերության հիման վրա: Ըստ հիմնական շինության մեջ մտնող կառույցների ապահովագրական գումարների բաշխման բացակայության դեպքում իրական վնասի չափը որոշվում է՝ ելնելով հիմնական շինության համար նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարից:

8.9.3 ապահովագրության օբյեկտի գտնվելու վայրում ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին գործող շինարարական նյութերի միջին շուկայական գների, աշխատանքների և նյութերի առաքման սակագների հիման վրա,

8.9.4 Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ անկախ փորձագետների կողմից կազմված կատարված աշխատանքների նախահաշիվների, ակտերի և այլ փաստաթղթերի հիման վրա,

8.9.5 Ապահովագրողի կողմից հաստատված գնահատման այլ նորմերի հիման վրա. ոչնչացված, վնասված կամ կորցրած ապահովագրության օբյեկտի վերանորոգման (վերականգնման) ծախսերի մասին մասնագիտացված կազմակերպությունների փաստաթղթերի, հաշիվների ու սակագների հիման վրա (հաշվարկներ, նախահաշիվներ, կտրոններ, հաշիվներ և այլ փաստաթղթեր):

8.10 Եթե գույքի կազմի մեջ մտնում են ապահովագրության այնպիսի օբյեկտներ, որոնց իրական (ապահովագրական) արժեքն անհայտ է, ապա դրանց իրական վնասի չափը որոշվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահի դրությամբ նմանատիպ գույքի իրական արժեքի հիման վրա:

8.11 Եթե Պայմանագիրը կնքելիս ապահովագրության օբյեկտի ապահովագրական արժեքը չի նշվում, ապա ապահովագրական հատուցման գումարը հաշվարկվում է Ապահովագրողի ներկայացուցչի կամ անկախ փորձագետի կողմից որոշվող ապահովագրական արժեքի հիման վրա: Եթե Ապահովադրի կողմից չի համաձայնվում ապահովագրական արժեքի նմանատիպ գնահատման հետ, ապա ապահովագրական արժեքն ապացուցելու պարտավորությունը կրում է Ապահովադիրը:

8.12 Ապահովագրության օբյեկտի մաշվածության տոկոսը որոշվում է՝ ելնելով ապահովագրության օբյեկտի տեսակից, կառուցման (ձեռքբերման, թողարկման տարեթվի) ժամանակաշրջանից, շահագործման աստիճանից և փաստացի վիճակից կամ գնահատող կազմակերպության կողմից տրված փաստաթղթերի կամ Ապահովագրողի կողմից իրականացված հաշվարկի հիման վրա:

8.13 Մաշվածության տոկոսը հաշվի չի առնվում հետևյալ դեպքերում՝

8.13.1 եթե շինությունների (բնակարանի), ներքին հարդարանքի, սարքավորման Պայմանագիրը կնքված է ապահովագրության օբյեկտի վերականգնման (վերանորոգման) ծախսերի «առանց մաշվածությունը հաշվի առնելու» (շահագործման ժամկետի ընթացքում) փոխհատուցման պայմանով,

8.13.2 տնային գույքի բոլոր առարկաների կամ առարկաների խմբերի (խմբերի բաժանում Կանոնների 7.19.2 կետին համապատասխան) ոչնչացման կամ կորստի դեպքում,

8.13.3 եթե ոչնչացվել, վնասվել կամ կորել են հավաքածուներ, նկարներ, բացառիկ և անտիկվար առարկաներ, որոնք ապահովագրվել էին իրավասու կազմակերպությունների կողմից գնահատված իրենց արժեքի չափով,

8.13.4 եթե ոչնչացվել, վնասվել կամ կորել են էկզոտիկ սենյակային բույսեր, ծառեր, ծաղկային դեկորատիվ մշակաբույսեր,

8.13.5 եթե ոչնչացվել, վնասվել կամ կորել են շինությունների շինարարության (կառուցման), շինության, բնակարանի ընթացիկ (կապիտալ) վերանորոգման համար նախատեսված շինարարական և հարդարանքի նյութեր,

8.13.6 եթե ոչնչացվել, վնասվել կամ կորել է փայտ, խոտ:

8.14 Տնային և/կամ այլ գույքի ոչնչացման, վնասման կամ կորստի դիմաց ապահովագրական հատուցումն Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին) իրականացվում է իրական վնասի չափով, սակայն Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում՝ հաշվի առնելով Պայմանագրի պայմանները (մաշվածությունը հաշվի առնելով ապահովագրություն, չհատուցվող գումար):

8.15 «Համամասնական» կամ «առաջին ռիսկի» հատուցման պայմանով ապահովագրված ապահովագրության օբյեկտի գծով ապահովագրական հատուցումը որոշվում է՝ հաշվի առնելով սույն Պայմանների 7.17 կետը:

8.16 Տնային գույքի առանձին առարկաների ոչնչացման, վնասման կամ կորստի դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշվում է իրական վնասի չափով, սակայն յուրաքանչյուր առարկայի համար ոչ ավելի, քան տնային գույքի ընդհանուր Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի 20 (քսան) տոկոսի չափով, որը չի կարող գերազանցել 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը, եթե Պայմանագիրը կնքելիս ընդհանուր ապահովագրական գումարում չի կատարվել տնային գույքի առարկաների գույքագրում: Մասնակի գույքագրման դեպքում տնային գույքի յուրաքանչյուր առարկայի համար ապահովագրական գումարի նկատմամբ նշված սահմանափակումը չի գործում այն առարկաների համար, որոնք առանձին գույքագրված են:

8.17 Այլ անձանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական հատուցումը հաշվարկվում է պատճառված վնասի ամբողջ ծավալով, սակայն ոչ ավել, քան 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ չափով (փաստաթղթային ձևով հաստատված երրորդ անձանց առողջությունը վերականգնելու նպատակով կատարվող բժշկական ծախսերը (բուժման ծախսեր, լրացուցիչ սնունդ, դեղորայքի ձեռքբերում, պրոթեզավորում, կողմնակի խնամք, սանիտարա-կուրորտային բուժում), հուղարկավորման ծախսերը, վնասի կարգավորման ծախսերը): Կանոնների 8.17 կետով նախատեսված ծախսերի հատուցումը վճարվում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված չափերի:

8.18 Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով այլ անձանց կյանքին և առողջությանը պատճառված վնասի փոխհատուցումն իրականացվում է միանվագ՝ անաշխատունակության տեղեկանքների, բժշկական եզրակացությունների, հաշիվների, բուժման ծախսերի և դեղատոմսերով ձեռք բերված դեղամիջոցների ծախսերի անդորրագրերի, հուղարկավորման ծախսերի արժեքի գծով փաստաթղթերի, ինչպես նաև այլ փաստաթղթերի պատճենների հիման վրա՝ կախված պատճառված վնասի ծավալից և բնույթից:

8.19 Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով այլ անձանց գույքին պատճառված վնասի չափը որոշվում է գույքի ապահովագրության գծով իրական վնասի չափը որոշելու համար ապահովագրության Պայմաններով սահմանված կարգի համաձայն՝ հաշվի առնելով մաշվածությունը գույքի շահագործման ամբողջ ժամանակահատվածի համար:

8.20 Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական հատուցումը տրամադրվում է այն անձանց, որոնց կյանքին, առողջությանը կամ գույքին հասցվել է վնաս (Շահառուներ):

Շահառուի մահվան դեպքում ապահովագրական հատուցումը տրամադրվում է նրա ժառանգներին, ապահովագրական հատուցման գումարի նկատմամբ ժառանգության իրավունք ձեռք բերելու մասին համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո: Շահառուի հուղարկավորման ծախսերը փոխհատուցվում են այդ ծախսերը կրած անձին:

8.21 Հայցերի (դիմումների) մինչդատական կարգով կարգավորման դեպքում պատճառված վնասի չափը Ապահովագրողի կողմից որոշվում է ապահովագրական պատահարի փաստը, հանգամանքները, ապահովագրական պատահարի հետևանքով վնասի չափը հավաստող փաստաթղթերի հիման վրա: Հայցերի (դիմումների) մինչդատական կարգով կարգավորման դեպքում ապահովագրական հատուցում իրականացնելու համար բավարար հիմքերի բացակայությամբ պայմանավորված Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշումն ընդունում է դատական մարմինների որոշման հիման վրա:

8.22 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է հետևյալ լրացուցիչ ծախսերը՝

ա) Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման նպատակով Ապահովադրի կողմից կատարած ծախսերը, եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումների համաձայն,

բ) ապահովագրական պատահարի գործը դատական մարմիններում վարելու համար Ապահովադրի կատարած ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր ցուցումներին համաձայն կամ նրա գրավոր համաձայնությամբ,

գ) Ապահովագրական պատահարի հետ կապված պատճառների և հանգամանքների պարզաբանման նպատակով Ապահովադրի կողմից կատարված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ:

8.24 Ապահովագրական հատուցման վճարումը Կանոնների 8.17 կետում նշված չափերով կատարվում է Շահառուին կամ Ապահովադրին, եթե վերջինս Ապահովագրողի հետ գրավոր համաձայնությամբ հատուցել է Շահառուին պատճառած վնասը: Ապահովագրական հատուցման վճարումը Ապահովադրին միանվագ կարող է կատարվել նաև եթե օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Ապահովադիրը պարտավոր է պատճառված վնասի համար վճարել հատուցում ամսեկան կամ այլ պարբերական մուծումներով:

8.25 Կանոնների համաձայն հատուցման ենթակա չեն Ապահովադրի կողմից վճարման ենթակա տույժերը, տուգանքները, այլ պատժամիջոցները:

8.26 Եթե Շահառուին պատճառված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովադրի կողմից, այլ նաև վնասի պատճառման համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում պատճառված վնասի և այն գումարի տարբերության չափը, որը պատճառված վնասի համար պատասխանատու անձանցից ենթակա է առգրավման (գանձման):

Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել այդպիսի անձանց առկայության և այդպիսի անձանցից գանձման ենթակա հատուցման գումարների մասին:

8.27 Պայմանագրի գծով բոլոր ապահովագրական պատահարների համար ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը (ներառյալ ադրի հեռացման և ապամոնտաժման հետ կապված ծախսերը և վնասի կարգավորման ծախսերը համաձայն Կանոնների 8.7 և 8.17 կետերի) չի կարող գերազանցել ապահովագրական գումարի չափը (բացառությամբ Կանոնների 8.6 կետով նախատեսված դեպքերի):

8.28 Եթե Ապահովադրին (Շահառուին) և Ապահովագրողին ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո չի հաջողվել համաձայնության գալ ապահովագրական հատուցման չափի վերաբերյալ, ինչպես նաև իրական կորստի (վնասի) չափը որոշելու համար կողմերից մեկի պահանջով կարող է նշանակվել փորձաքննություն՝ շահագրգիռ կողմի հաշվին: Ապահովադրի (Շահառուի) կողմից փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու դեպքում ապահովագրական հատուցման չափը կարող է որոշվել դատարանի որոշմամբ:

8.29 Կատարված ապահովագրական հատուցումն Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին ենթակա է վերադարձման, եթե վնասն ամբողջովին փոխհատուցվել է (դրամական, բնաիրային արտահայտությամբ) մեղավոր անձի կողմից, կամ դատարանի որոշմամբ (վճռով) դրա փոխհատուցումը կատարվում է պատճառված վնասի համար պատասխանատու անձի (ոչ Ապահովադրի (Շահառուի)) կողմից: Գողացած գույքը վերադարձնելու դեպքում ապահովագրական հատուցումն Ապահովադրի (Շահառուի) կողմից ենթակա է վերադարձման Ապահովագրողին՝ նվազեցնելով դրա վերականգնման (վերանորոգման) հետ կապված ծախսերը:

8.30 Եթե մեղավոր կողմը վնասը փոխհատուցել է մասնակիորեն և ապահովագրական հատուցման հասանելի գումարից քիչ չափով, ապա Ապահովագրողն Ապահովադրին (Շահառուին) կատարում է ապահովագրական հատուցում մեղավոր կողմից չփոխհատուցված մասին համապատասխան չափով, սակայն՝ ապահովագրական գումարի սահմաններում:

8.31 Ապահովագրական հատուցման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղից կատարված վճարման օրը կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվից ապահովագրական հատուցման գումարի դուրսգրման օրը:

8.32 Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից վճարված գումարի սահմաններում (սուբրոգացիա):

8.33 Կանոնների 8.32 կետում նշված պահանջը չի ներկայացվում՝

8.33.1 Ապահովադրի (Շահառուի) ընտանիքի անդամին,

8.33.2 այլ ապահովագրության պայմանագրով ապահովագրված Ապահովադրին, որը նույն ապահովագրական պատահարի համար, նույն Ապահովագրողի կողմից պետք է ստանա ապահովագրական հատուցում:

8.34 Պայմանագրում մեկ ապահովագրական պատահարի, մեկ ապահովագրական ռիսկի, մեկ օբյեկտի, ինչպես նաև մեկ անձի կյանքին կամ առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասի գծով ապահովագրական հատուցման սահմանային չափի պայմանը ներառելու դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված սահմանափակումները:

8.35 Ոչ պայմանական չհատուցվող գումարի (ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով կամ բացարձակ արտահայտությամբ) կիրառման պայմանով Պայմանագիր կնքելիս, ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է վնասի իրական չափից չհատուցվող գումարի չափը նվազեցնելով («համամասնական» հատուցման պայմանով կնքված Պայմանագրի դեպքում չհատուցվող գումարը նվազեցվում է ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն հաշվարկված վնասի իրական չափից):

8.36 Պայմանական չհատուցվող գումարի (ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով կամ բացարձակ արտահայտությամբ) կիրառման պայմանով Պայմանագիր կնքելիս.

8.36.1 վնասը փոխհատուցվում է ամբողջությամբ, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարի չափը,

8.36.2 չհատուցվող գումարի չափը չգերազանցող վնասը չի փոխհատուցվում:

ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9.1 Ապահովագրողն ազատվում է գույքի ապահովագրության գծով ապահովագրական հատուցում իրականացնելու իր պարտավորություններից, եթե՝

9.1.1 ապահովագրական պատահարը հանդիսացել է Ապահովադրի (Շահառուի) կամ նրա ընտանիքի՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու դրությամբ գործունակ անդամի միտումնավոր գործողությունների հետևանք, կամ վնասը պատճառվել է նրանց այնպիսի գործողությունների հետևանքով, որոնք իրավասու մարմինների կամ դատարանի կողմից որակվում են որպես դիտավորյալ հանցագործություն,

9.1.2 Ապահովադիրը (Շահառուն) խախտում է Կանոնների 7.3 կետի 7.3.6 ենթակետով սահմանված պարտավորություններից որևէ մեկը, ինչի արդյունքում հնարավոր չի լինում որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառը կամ հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը,

9.1.3 Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

9.2 Եթե Ապահովադիրը (Շահառուն), Ապահովադրի (Շահառուի) ընտանիքի անդամները չեն կատարել Կանոնների 7.3 կետի 7.3.4 ենթակետում նշված որևէ պահանջ և Ապահովադիրը (Շահառուն) չի կատարել 7.3.5 ենթակետում նշված որևէ պահանջ, ինչի հետևանքով տեղի է ունեցել ապահովագրական պատահար, ինչը հաստատում է գտել իրավական մարմինների եզրակացության

մեջ, Ապահովագրողն իրավունք ունի որպես տուգանք ապահովագրական հատուցման չափը նվազեցնել 20 (քսան) տոկոսով, իսկ նշված պարտավորությունները միտումնավոր չկատարելու դեպքում՝ ամբողջությամբ մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

9.3 Ապահովագրողն ազատվում է քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական հատուցում իրականացնելու իր պարտավորություններից, եթե՝

9.3.1 ապահովագրական պատահարը հանդիսացել է Ապահովադրի (Ապահովագրված անձի) միտումնավոր գործողությունների հետևանք կամ վնասը հասցվել է նրա գործողություններով, որոնք իրավասու մարմինների կամ դատարանի կողմից որակվում են որպես դիտավորյալ հանցագործություն,

9.3.2 Ապահովադիրը (Ապահովագրված անձը) անհրաժեշտ ինքնապաշտպանության արդյունքում վնաս է պատճառել այլ անձի (Շահառուի), որն անմիջական ոստնձգություն է իրականացրել Ապահովադրի (Ապահովագրված անձի)՝ օրենքով պաշտպանված իրավունքների և շահերի նկատմամբ:

9.4 Ապահովագրողը չի հատուցում Կանոնների 2.5 կետում նշված ապահովագրության օբյեկտներին, ինչպես նաև այդ օբյեկտների գծով այլ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասները:

ԲԱԺԻՆ 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

10.1 Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Ապահովագրության պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

10.2 Այն դեպքում, երբ 10.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

10.3 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Ապահովագրության պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Կանոնների համաձայն կնքված Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

11.2 Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

11.3 Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն Կանոնների նկատմամբ: